ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3/4.2-2-24

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2024թ. հուլիսի 4-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ս.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Հանձնաժողովի նախագահ
Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ
Ս.Ասլիզադյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Ա.Սողբաթյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության գլխավոր մասնագետի պաշտոնակատար
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի օրակարգը.

- մրցույթի արդյունքների վերջնական ամփոփում:

Լսեցին՝

Տեղեկատվություն՝ 2024 թվականի հունիսի 27-ին կայացած նիստի N40/4.2-2-24-ԴՄ որոշմամբ պահանջվող փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ:

Նշվեց, որ

2024 թվականի հունիսի 27-ին կայացած մրցութային հանձնաժողովի նիստի քննարկման արդյունքում առաջարկվել էր Ծրագրի հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող թվով 2 (երկու) կազմակրեպությանը՝ «Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ին և «Սիսիանի զարգացման նախաձեռնություններ» ՀԿ-ին մինչև 2024 թվականի հուլիսի 4-ի ժամը 14:00-ը Հանձնաժողովին ներկայացնել կազմակերպության գրասենյակի տարածքի վարձակալության պայմանագրի նոտարական վավերացված տարբերակի պատճենը: Նշված ժամկետում պահանջվող փաստաթղթի չներկայացնելը հիմք կարող էր հանդիսանալ կազմակերպության հայտը մերժելու համար:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Մերժել 2** (երկու) կազմակերպության՝

- «Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի,
- «Սիսիանի զարգացման նախաձեռնություններ» ՀԿ-ի կողմից ներկայացված հայտերը,

հաշվի առնելով, որ 2024 թվականի հունիսի 27-ին կայացած նիստի N40/4.2-2-24-ԴՄ որոշմամբ պահանջվող փաստաթղթերը սահմանված ժամկետում չեն ներկայացվել:

2. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ս.Հակոբյան
(հանձնաժողովի նախագահ) -

Ա.Մկրտչյան -

Ս.Ասլիզադյան -

Ս.Հովհաննիսյան -

Ա.Սողբաթյան -

Հ.Սահակյան -

Շ.Հովսեփյան -